

ՊԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ EX OFFICIO ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՄ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՀՅ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սերգեյ ՄԱՐԱԲՅԱՆ

ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ, ՀՀ դատական դեպարտամենտի կազմակերպչիրավական վարչության պետ

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում հանցագործություններից տուժողների գույքային իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցների շարքում սահմանված է դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման մասին առանց հայցի որոշում ընդունելու ինստիտուտը, որը դուրս է հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման պրակտիկ տարածումն ստացած օրենսդրական այնպիսի կառուցակարգի շրջանակներից, ինչպիսին քաղաքացիական հայցի ինստիտուտն է, ավելին՝ այն որոշ դեպքերում լրացնում է քաղաքացիական հայցին:

Այս հետևությունն ուղղակիորեն բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի այն պահանջից, որ դատարանը պետք է լուծի այն հարցը, թե պատճառված գույքային վնասը ենթակա է արդյոք հատուցման, եթե քաղաքացիական հայց չի հարուցվել: Սակայն պետք է նկատել, որ դատարանի այս լիազորությունն այդքան էլ լայն չէ, որքան թվում է առաջին հայացքից. այն կիրառելի է միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 164-րդ հոդվածում սահմանված բացառիկ դեպքերում, երբ քաղաքացին զրկված է իր գույքային շահերն անձամբ պաշտպանելու հնարավոր

ությունից:

Այս մոտեցումը հիմնավորում է նաև Դատարանների նախագահների խորհուրդն իր 2006 թվականի հունիսի 13-ի «Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի քննության դատական պրակտիկայի մասին» թիվ 100 որոշմամբ, որում մասնավորապես նշված է, որ բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 164-րդ հոդվածով նախատեսված բացառիկ դեպքերի՝ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը կարող է քննության առնվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան ներկայացված հայցադիմումի առկայության դեպքում:

Հակառակ օրենսդրական կարգավորման՝ դատական պրակտիկայում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ դատարաններն առանց հայցի, սեփական նախաձեռնությամբ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման մասին որոշումներ են կայացնում, երբ բացակայում է քրեական դատավարության օրենսգրքի 164-րդ հոդվածի պայմանը: Այդ պրակտիկան տարածված է հատկապես պետությանը պատճառված վնասների հատուցման մասով: **Օրինակ, ՀՅՔՐԴ 2/0176/01/08 քրեական գործով դատարանն առանց քաղաքացիական հայցի որոշել է Գ.Ս-ից հօգուտ պետական բյուջեի բռնագանձել 6.776.849 դրամ՝ որպես հանցագործության հետևանքով հասցված վնասի հատուցում:**

Անհրաժեշտ է նկատել, որ դատական պրակտիկայում հանդիպում են նաև մեկնաբանություններ այն մասին, որ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի և 164-րդ

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

հոդվածների պահանջները չպետք է պայմանավորել մեկը մյուսով, որ դրանք ինքնուրույն իրավակարգավորումներ են:

Այս առումով ուշագրավ է հատկապես Արդարադատության խորհրդի (այսուհետ՝ ԱԽ) ԱԽ-11-Ո-09 2010 թվականի¹ որոշումը, որում ԱԽ-ն այն իրավական դիրքորոշումն է արտահայտել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի ձևակերպման դեպքում դատարանը կարող է այդ դրույթը մեկնաբանել ինքնավար, այնպես որ մեղադրյալի դեմ քաղաքացիական հայց չհարուցելու կամ այլ անձի դեմ քաղաքացիական հայց հարուցելու պայմաններում դատարանն իրավասու լինի սեփական նախաձեռնությամբ որոշելու հանցագործությամբ պատճառված գույքային վնասը հատուցելու պարտականություն ունեցող անձին, եթե անգամ նրա նկատմամբ քաղաքացիական հայց հարուցված չի եղել: **Ընդ որում, ըստ ԱԽ-ի՝ ողջամիտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի ինքնավար մեկնաբանումը և կիրառումը՝ այն չպայմանավորելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 164-րդ հոդվածում նշված պայմանի՝ իր գույքային շահերը անձամբ պաշտպանելու հնարավորությունից քաղաքացուն զրկված լինելու պայմանի հետ:**

Համաձայնվելով ԱԽ-ի հետ այն հարցում, որ դատարանը պետք է որոշի պատճառված վնասի համար պատասխանողին, չենք կարող համաձայնվել այն մոտեցման հետ, որ դա պայմանավորված է 360-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, ինչպես նաև, որ դատարանն առանց հայցի կարող է անձին ներգրավել որպես պատասխանող: Քաղաքացիական պատասխանողին որոշելու դատարանի պարտականությունն ուղղակիորեն բխում է քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածից, որի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական

պատասխանող ճանաչելու մասին որոշումն ընդունում է (...) դատարանը օրենքին համապատասխան: Նույն հոդվածի 1-ին մասի իմաստով դատարանի այդ պարտականությունը պայմանավորված է միայն օրենքով սահմանված կարգով ներկայացված հայցի առկայությամբ, եթե բացակայում է հայցը, ապա դատարանը չի կարող որևէ անձի ներգրավել որպես պատասխանող²:

Բացի այդ, համընդհանուր մոտեցումն այն է, որ դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ պատճառված վնասի հատուցման հարցը լուծելու դեպքում վնասը հատուցելու պարտականությունը կարող է դրվել բացառապես մեղադրյալի վրա. բացի մեղադրյալից, դատարանը որևէ այլ անձի վրա նման պարտականություն դնելու իրավունք չունի³, իսկ մեղադրյալը քաղաքացիական պատասխանող չի ճանաչվում: Հետևաբար, ԱԽ-ի մեկնաբանություններն այն մասին, որ դատարանն ինքնուրույն պետք է որոշի պատասխանողին՝ անկախ նրանից՝ հայց հարուցված է, թե՞ ոչ, ուղղակիորեն հակասում է քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորումներին:

ԱԽ-ի մոտեցումը հակասում է նաև Վճռաբեկ դատարանի ձևավորած պրակտիկային: Այս առումով ուշագրավ է հատկապես Արարատ Հովելի Դավթյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի ՎԲ-139/07 գործով արտահայտած իրավական դիրքորոշումն այն մասին, որ հայցադիմումի բացակայության պայմաններում «Դիլիջան» ազգային պարկի աշխատակցի ցուցմունքների հիման վրա քաղաքացիական հայցի բավարարումը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից: Ուստի վերաքննիչ դատարանը իրավացի է գտնվել՝ բեկանելով դատավճռի այն մասը, որով առանց հայցադիմումի առկայության լուծում է տրվել քաղաքացիական հայցին:

Ինչևէ, չհամաձայնվելով ԱԽ-ի հետ՝ նշենք, որ նույնիսկ քրեական դատավա-

րության օրենսգրքի 164-րդ հոդվածում տեղ գտած իրավակարգավորումը, որը թեև պայմանավորված է անպաշտպան տուժողների գույքային շահերի պաշտպանության նկատառումներով, սկզբունքային մի շարք խնդիրներ է առաջացնում քրեական դատավարությունում դատարանի դերի, գույքային պատասխանատվության ենթարկելու ընդհանուր սկզբունքների, վնասների հատուցման պարտականություն կողմ անձանց պաշտպանության իրավունքի և այլ հարցերի հետ կապված: Ուստի, այս պայմաններում սեփական նախաձեռնությամբ հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման մասին առանց հայցի որոշում կայացնելու մասին դատարանի հայեցողության շրջանակները ընդարձակելու ԱՄ-ի մոտեցումը, կարծում ենք, արդարացված չէ:

Քննարկվող ինստիտուտի էությունը այն է, որ դատարանն առանց քաղաքացիական հայցի սեփական նախաձեռնությամբ խորհրդակցական սենյակում որոշում է կայացնում հանցագործության հետևանքով պատճառված վնասի հատուցման մասին՝ այդ հարցի վերաբերյալ չլսելով ոչ տուժողի, ոչ էլ պաշտպանության կողմի կարծիքները:

Կարծում ենք՝ օրենսդրական հիշյալ կարգավորումը կասկածի տակ է դնում սահմանադրությամբ ամրագրված հիմնարար սկզբունքներից մեկը՝ արդարադատության իրականացումը մրցակցության և կողմերի իրավահավասարության հիման վրա: Ինքնուրույն իրականացնելով հայցի ապացուցումը՝ դատարանը, ըստ էության, կանգնում է մեղադրանքի կողմը՝ դրանով իսկ վատթարացնելով պաշտպանության կողմի վիճակը, խախտելով նաև մեղադրյալի պաշտպանության իրավունքը: Ի դեպ, սկզբունքային նշանակություն ունի այն, որ դատարանն այդ ապացուցումն իրականացնում է ոչ թե դատաքննության ընթացքում, այլ խորհրդակցական սենյակում:

Հարկ է ընդգծել, որ թեև հիշյալ ինստիտուտը պայմանավորված է անպաշտպան

տուժողների շահերով, սակայն անկասկած է, որ միաժամանակ վատթարանում է նաև տուժողի վիճակը: Նա հնարավորություն չի ունենում արտահայտելու իր կարծիքը վնասի չափի և այլ հարցերի վերաբերյալ: Ավելին, քանի որ պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքը քաղաքացիական իրավունք է, ուստի դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ պատճառված վնասի հատուցման մասին առանց հայցի որոշում կայացնելու ինստիտուտը (որը համարվում է անձի վնասների հատուցման մասին գրավոր պահանջը) հակասում է նաև քաղաքացիական օրենսգրքում ամրագրված այն հիմնարար սկզբունքին, որ քաղաքացիները քաղաքացիական իրավունքներ ձեռք բերում և իրականացնում են իրենց կանքով, քանի որ, փաստորեն, այս դեպքում նրանց պարտադրվում է ստանալ վնասների հատուցում:

Այս առումով տեղին է նշել ՌԴ սահմանադրական դատարանի 2001 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 297-Օ որոշումը, որում դատարանը, անդրադառնալով ՌՍՖՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 7-րդ մասում ամրագրված՝ դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման մասին որոշում կայացնելու իրավակարգավորման սահմանադրականության հարցին, նշում է. «Քաղաքացիական հայցի բացակայության դեպքում դատարանը, խորհրդակցական սենյակում առանց կողմերի մասնակցության քննարկելով հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման հարցը, փաստացի իր վրա է վերցնում կողմերի իրավունքների և պարտականությունների իրականացումը, իսկ ամբաստանյալը, որը համարվում է պատասխանողը, և տուժողը զրկվում են ամբողջական և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից, քանի որ հնարավորություն չեն ունենում դատարանին ամբողջությամբ ներկայացնել հայցի վերա-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

բերյալ իրենց դիրքորոշումը:

Քրեական դատավարությունում քաղաքացիական հայց հարուցելը համարվում է հանցագործությունից վնաս կրած անձի իրավունքը, այլ ոչ թե պարտականությունը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև՝ դատախազության խնդիրը: Դատարանի պարտականությունն է ստուգել նրանց գործունեության արդյունքները՝ օբյեկտիվորեն և անկողմնակալ լուծելով անձի դեմ ներկայացված պահանջների օրինականությունն ու հիմնավորվածությունը: Քրեական դատավարությունում հայց չներկայացնելը կարող է վկայել այն մասին, որ տուժողը այս կամ այն պատճառով որոշել է հրաժարվել նրանից: Այս պայմաններում դատարանի կողմից պատճառված վնասի հատուցման հարցի նախաձեռնությունն իր վրա վերցնելը համարվում է քաղաքացիական իրավահարաբերություններում դիսպոզիտիվության սկզբունքի խախտում և կարող է գնահատվել որպես մեղադրանքի գործառույթի իրականացում դատարանի կողմից, և, փաստորեն, իրենից ներկայացնում է տուժողի վրա պաշտպանություն ստանալու պարտականություն դնել, որի մասին նա չի միջնորդել»:

Ըստ այդմ, ՌԴ սահմանադրական դատարանը սեփական նախաձեռնությամբ՝ առանց հայցի հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելու մասին դատարանի որոշում կայացնելու իրավակարգավորումը ճանաչել է հակասահմանադրական:

Ի տարբերություն ՌԴ սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական ճանաչված նորմի (ՌՍՖՍՐ ԹԴՕ-ի 29-րդ հոդվածի 7-րդ մաս), որը վերաբերում էր դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ որոշում կայացնելուն՝ հօգուտ պետական կամ հասարակական կազմակերպությունների, ընդ որում՝ ստացիոնար բուժման վերաբերյալ ծախսերի

հատուցման մասով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում խոսքը միայն ֆիզիկական անձանց օգտին որոշում կայացնելու դատարանի իրավասության մասին է, ի դեպ՝ այն անձանց, ովքեր զրկված են իրենց գույքային շահերն անձամբ պաշտպանելու հնարավորությունից: Այդուհանդերձ, դատարանի դերին, կողմերի մրցակցությանը, մեղադրյալի պաշտպանության իրավունքին վերաբերող խնդիրները դրանով չեն վերանում, ուստիև քրեական դատավարության օրենսգրքի 164-րդ հոդվածի իրավակարգավորումը ՀՀ սահմանադրությամբ ամրագրված մի շարք հիմնարար սկզբունքների հետ խնդիրներ է առաջացնում:

Ուստի, կարծում ենք՝ ոչ միայն չպետք է ընդարձակվի սեփական նախաձեռնությամբ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման մասին որոշում կայացնելու դատարանի հայեցողության շրջանակները, այլև պետք է մտածել քրեական դատավարության օրենսգրքի 164-րդ հոդվածում սահմանված իրավակարգավորման կատարելագործման ուղղությամբ՝ այն հաշվով, որպեսզի խնդիրներ չառաջանան ինչպես դատարանի դերի, այնպես էլ ամբաստանյալի պաշտպանության իրավունքի և այլ սկզբունքային հարցերի վերաբերյալ:

Անհրաժեշտ է նկատել, որ ՌԴ ՍԴ հիշյալ որոշմամբ պայմանավորված՝ ՌԴ օրենսդիրը 2002 թվականին ընդունած քրեական դատավարության օրենսգրքում անպաշտպան տուժողների շահերի պաշտպանության համար նախատեսեց դատախազի կողմից հայց հարուցելու հնարավորությունը: Այսինքն՝ դատարանը գործող ՌԴ քրեական դատավարության օրենսդրությամբ սեփական նախաձեռնությամբ պատճառված վնասի հատուցման մասին որոշում կայացնելու իրավասությամբ օժտված է:

Դատախազի կողմից անպաշտպան տուժողների գույքային շահերի պաշտպանության համար հայց հարուցելու իրա-

վունքը սահմանված է նաև ԱԴԶ որոշ երկրների օրենսդրությամբ:

Ուզբեկստանի քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ դատախազը հարուցում և պաշտպանում է հարուցված հայցը, եթե դա է պահանջում նաև ֆիզիկական անձանց շահերը: Ըստ այս օրենսգրքի՝ դատարանը սեփական նախաձեռնությամբ պատճառված վնասի հատուցման մասին որոշում չի կարող կայացնել՝ բացառությամբ իրեղեն ապացույցների ճակատագիրը լուծելու ժամանակ ընդունվող որոշումների, որոնց համաձայն՝ դատարանը կարող է հանցագործության գործիքները, առարկաները, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը և այլնը վերադարձնել տուժողին, օրինական տիրապետողին կամ նախկին սեփականատիրոջը: Նման կարգավորում նախատեսված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (ՀՀ քր. դատ. օր. ի 119-րդ հոդված):

Ղազախստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքը նույնպես դատարանին հնարավորություն չի տալիս սեփական նախաձեռնությամբ պատճառված վնասի հատուցման մասին որոշում կայացնելու: Այս օրենսգրքի 62-րդ հոդվածի համաձայն՝ մեղադրյալից կախվածության մեջ գտնվելու կամ այլ պատճառով սեփական շահերը պաշտպանելու հնարավորությունից զրկված տուժողի շահերի պաշտպանության համար հայց հարուցում է դատախազը:

Այս առումով հետաքրքրական է նաև Ադրբեջանի քրեական դատավարության օրենսգրքի կանոնակարգումները, որի 181-րդ հոդվածում սահմանված է, որ դատախազը հայց հարուցելու միջոցով պաշտպանում է նաև ֆիզիկական անձի իրավունքները, եթե վերջինս թեև իրավունք ունի հարուցելու հայց, սակայն զրկված է իր շահերն անձամբ ներկայացնելու հնարավորությունից:

Այս հիմքով դատախազը կարող է հարուցել և պաշտպանել հարուցված հայցը,

եթե ֆիզիկական անձը անգործունակ կամ սահմանափակ գործունակ է:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ ըստ Ադրբեջանի քրեական դատավարության օրենսգրքի 188-րդ հոդվածի (**դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ նյութական վնասի հատուցման հարկադրելը**)՝ եթե անձը զրկված է ներկայացված հայցը դատական քննության ընթացքում անձամբ պաշտպանելու հնարավորությունից, դատարանն իրավունք ունի բացառության կարգով սեփական նախաձեռնությամբ ընդունելու որոշում պատճառված վնասի հատուցման մասին, եթե քրեական գործով ապացույցներն ու փաստաթղթերը կամ քրեական հետապնդմանը վերաբերող այլ նյութերը թույլ են տալիս անելու դա:

Ընդունելի համարելով դատախազի կողմից անպաշտպան տուժողների շահերի պաշտպանության համար հայց հարուցելու իրավակարգավորումը՝ նշենք, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը հնարավոր չի համարում դատախազին նման լիազորություն վերապահելը:

ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի իմաստով դատախազը կարող է հայց հարուցել միայն պետության գույքային շահերի պաշտպանության համար, ինչը բացառում է բացի պետության գույքային շահերից որևէ այլ սուբյեկտի գույքային շահերի պաշտպանության համար դատախազի կողմից հայց հարուցելը: Կարծում ենք՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դատախազի մնացած լիազորությունները նույնպես հնարավոր չեն համարում ճյուղային օրենսդրությամբ դատախազի համանման լիազորության նախատեսումը:

Դատախազի կողմից անպաշտպան տուժողների շահերի պաշտպանության համար հայց հարուցելու տարբերակը ՀՀ իրավակիրառ պրակտիկայի պայմաններում խնդրահարույց է նաև այլ տեսանկյունից: Գործող օրենսդրական կարգավորման պայմաններում, երբ ՀՀ քրեական դա-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

տավարության օրենսգրքում դատախազի վրա պարտականություն է դրված պետության գույքային շահերի պաշտպանության հայց հարուցելու մասին (քր. դատ. օր-ի 52-րդ հոդված), դատախազները չեն կատարում նույնիսկ իրենց պարտականությունը⁴, ուստի այս պայմաններում խոսել տուժողի գույքային շահերի պաշտպանության համար դատախազի հայց հարուցելու մասին, կարծում ենք, անիրատեսական է:

Տեսության մեջ մոտեցում կա այն մասին, որ քննիչին պետք է իրավունք վերապահել անպաշտպան տուժողներին հայցվոր ճանաչելու համար, եթե նրանք չեն կարող անձամբ պաշտպանել իրենց գույքային իրավունքները⁵:

Ֆ.Ն. Բագուտդինովը նշում է՝ քննիչին պետք է իրավունք վերապահվի անպաշտպան տուժողների շահերի պաշտպանության համար հայց հարուցելու՝ պայմանով, որ այդ հայցը պետք է հարուցվի տուժողի համաձայնությամբ, հաստատվի և պաշտպանվի դատախազի կողմից⁶: Համաձայնվելով ասվածի հետ՝ Ա.Վ. Տիմոչենկոն նշում է՝ քննիչին նման իրավունք վերապահելը պայմանավորված է այն հանգամանքով, որ նա ինքնուրույն իրականացնում է դատավարական գործողություններ քրեական գործը հարուցելու ու քննելու ուղղությամբ և կրում է պատասխանատվություն դրանք ժամանակին կատարելու համար, իսկ քաղաքացիական հայցը քրեական գործում անքակտելիորեն կապված է մեղադրանքի հետ, բխում է նրանից, ուստի մեղադրանքի հիմնավորվածությունը կանխորոշում է նաև հայցի հիմնավորվածությունը⁷:

Թեև այս մոտեցումը որոշակի տեսական հետաքրքրություն ներկայացնում է, սակայն ՀՀ Սահմանադրության իրավակարգավորումների պայմաններում նույնպես չի կարող իրականացվել, քանի որ

դատախազը չի կարող պաշտպանել այն հայցը, որը չի վերաբերում պետության գույքային շահերին, իսկ քննիչի հարուցած հայցը, եթե չի պաշտպանվելու դատավարական որևէ սուբյեկտի կողմից, դառնում է անիմաստ:

Կարծում ենք՝ կարելի է գնալ հարցի լուծման այլ ճանապարհով, այն է՝ օրենքում սահմանել, որ դատարանը, տեսնելով, որ կան 164-րդ հոդվածով նախատեսված սեփական նախաձեռնությամբ պատճառված վնասը հատուցելու մասին որոշում կայացնելու հիմքերը (առկա է պատճառված գույքային վնասը, որը կարող է հատուցվել քրեական դատավարության կարգով, սակայն տուժողը զրկված է իր շահերը պաշտպանելու հնարավորությունից), պետք է մինչև դատաքննության ավարտը իր նախաձեռնությամբ քննարկման առարկա դարձնի նաև պատճառված վնասի հատուցման հարցը՝ լսելով կողմերին, քանի որ դրանից կարող են կախված լինել նաև պատժի տեսակը և չափը որոշելու հարցը:

Թեև հարցի լուծման այս տարբերակի դեպքում խնդիր կարող է առաջանալ դատարանի դերի հետ կապված, սակայն այն արդարացված է, քանի որ պատճառված վնասը հատուցելու հարցում դատարանի ակտիվությունը պայմանավորված է միջազգային իրավական ակտերի պահանջներով:

«Տուժողի դերը քրեական իրավունքում և դատավարությունում» ԵԽՆԿ 87 հանձնարականի 10-րդ կետի համաձայն՝ *քրեական դատարանը պետք է հնարավորություն ունենա հանցագործի հաշվին տուժողին փոխհատուցելու մասին որոշում կայացնելու: Այդ նպատակի համար հանձնարարականում սահմանված է, որ անդամ պետությունները պարտավոր են վերացնել բոլոր սահմանափակումները կամ տեխնիկական խոչընդոտները, որոնք սահմանափակում են դատարանի՝ նման որոշում կայացնելու հնարավորությունը:*

Հիշյալ առաջարկությունը պրակտիկա-

յուն ամբողջական իրացնելու նպատակով անհրաժեշտ է նախ՝ լրացում կատարել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում՝ այնտեղ որպես ապացուցման ենթակա հանգամանք սահմանել՝ հանցագործությամբ պատճառված վնասի բնույթն ու չափը պարզելը, որպեսզի քննիչը մինչդատական վարույթում ապացույցներ հավաքի նաև այդ ուղղությամբ, իսկ դատարանն իրական հնարավորություն ունենա այդ հարցը դարձնելու քննարկման առարկա և կայացնելու որոշում:

Երկրորդ՝ անհրաժեշտ է օրենքում սահմանել նաև բացառիկ համարվող դեպքերը, որպեսզի հստակություն մտցվի նաև դատարանի հայեցողական լիազորության իրականացման հարցում: Ներկայիս օրենսդրությանը համապատասխան՝ խոսքը ֆիզիկական անձի կողմից անձամբ իր շահերը պաշտպանելու հնարավորությունից զրկված լինելու մասին է, իսկ թե որոնք են այդ դեպքերը, օրենքը չի տալիս:

Այս առումով կարելի ընդօրինակել ԱՊՀ

երկրների փորձը, օրինակ՝ եթե տուժողը կախվածության մեջ է գտնվում մեղադրյալից⁶, անգործունակ կամ սահմանափակ գործունակ է⁹:

Այսպիսով, անհրաժեշտ է քրեական դատավարության օրենսգրքի 164-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«Այն դեպքում, երբ քաղաքացին զրկված է իր զույքային շահերն անձամբ պաշտպանելու հնարավորությունից՝ մեղադրյալից կախվածության մեջ գտնվելու, անգործունակ կամ սահմանափակ գործունակ լինելու պատճառով, դատարանն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ որոշում կայացնելու հանցագործության հետևանքով պատճառված վնասը հատուցելու մասին:

Հիշյալ հիմքերի առկայության դեպքում՝ դատարանը մինչև դատաքննության ավարտը պետք է քննարկման առարկա դարձնի նաև պատճառված վնասի հատուցման հարցը՝ կողմերի կարծիքն այդ հարցի վերաբերյալ լսելու համար»:

¹ Տե՛ս ԱԽ-11-Ո-09 2010 թվականի որոշումը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ե.Դարբինյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

² Այս մասին մանրամասն տե՛ս **Մարաբյան Ս.** ՀՀ քրեական դատավարությունում քաղաքացիական պատասխանողի դատավարական կարգավիճակի որոշ հիմնախնդիրներ // Դատական իշխանություն, 2010/ 9/134, սեպտեմբեր, էջ 28-35.

³ Այս հարցերի մասին տե՛ս Նոր В.Т. Защита имущественных прав в уголовном судопроизводстве. Киев, 1989, էջեր 103-151, **Лившиц Ю., Тимошенко А.** Назначение института гражданского иска в уголовном процессе // Российская юстиция. 2002/6, Բելորուսի Հանրապետության գերագույն դատարանի պլենումի «Դատարանների կողմից քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի քննության դատական պրակտիկայի մասին» 2004 թվականի հունիսի 24-ի որոշման 17-րդ կետը

և այլն:

⁴ Այս մասին տե՛ս Մարաբյան Ս. Հանցագործությունից վնաս կրած անձին հայցվոր ճանաչելու դատավարական կարգի որոշ հիմնախնդիրներ ՀՀ քրեական դատավարությունում // Պետություն և իրավունք, 2010/ 2 (48), էջ 64-76:

⁵ Տե՛ս Михайленко А.Р. Расследование преступлений. Законность и обеспечение прав граждан. Киев. 1999. с.129.

⁶ Տե՛ս Багаутдинов Ф.П. Обеспечение имущественных прав личности при расследовании преступлений. М., 2002. с. 99.

⁷ Տե՛ս Тимошенко А.В. Теоретические и практические вопросы гражданского иска в предварительном расследовании: Дисс. канд. юрид. наук. Челябинск. 2002. с. 100-101.

⁸ Ուզագիստանի քրեական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդված:

⁹ Ադրբեջանի քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդված:

Քրեպաշտի իրավունք եւ**Դատաւարութեան****ВОПРОСЫ ПРИНЯТИЯ РЕШЕНИЙ СО СТОРОНЫ СУДА О
ВОЗМЕЩЕНИИ УБЫТКОВ ЕХ OFFICИО БЕЗ
ГРАЖДАНСКОГО ИСКА В УГОЛОВНОМ
СУДОПРОИЗВОДСТВЕ РА****Сергей МАРАБЯН**

*Начальник организационно-правового
управления судебного департамента РА,
соискатель юридического факультета ЕГУ*

Эта статья Сергея Марабяна посвящена вопросам принятия решений со стороны суда о возмещении убытков без гражданского иска в уголовном судопроизводстве РА. Анализируя регулирующие нормы вышеуказанного института кодекса уголовного судопроизводства РА, автор приходит к тому заключению, что с точки зрения правоприменительной и законодательной практики этого института существует ряд принципиальных вопросов. С точки зрения правоприменительной практики делается попытка необоснованно уширить это полномочие суда без обращения внимания

на законодательные урегулирования, а с точки зрения законодательного урегулирования суд в совещательной комнате принимает такое решение, которое приводит к нарушению права защиты личности несущего ответственность за возмещение убытка. Кроме этого, в законе не перечислены те случаи, когда суд может принять такое решение. На основе вышесказанного автор предлагает, чтобы вопрос возмещения убытка до окончания судебного следствия суд сделал предметом следствия, чтобы выслушал мнение об этом как со стороны потерпевшего, так и со стороны защиты. Одновременно, предлагает четко перечислить те случаи, когда суд может принять такое решение, чтобы внедрить ясность в вопросе совершения осмотрительного полномочия в суде для предотвращения необоснованного расширения его рамок на практике.